ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

# ԱՐՇԱԼՈՅՍ

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ

Առաջին երեսում տողը (petite) 6 շահի
Վերջին ,, ,, ,, 3 շահի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում ամիսը 1,50
Գաւառներում ,, 2 ղր.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆ ԱՐԺԷ
8 ՇԱՀԻ

Հասցէն՝ Redaction „Arckalousse" Tauris (Perse) | اداره روزنامه «آرشالوس» تبریز

Խմբագրութեան հետ գործ ունեցողները դիմեն «Պատանեկական Բիւրօ» Հայկ Խախանեանին

Բ. ՏԱՐԻ № 18 ՀԻՆԳՇԱԲԹԻ 11 (24) ՅՈՒԼԻՍ 1919 Թ. Բ. ՏԱՐԻ

Շարունակւում է բաժանորդագրութիւն

Թաւրիզի Հ. Յ. Դ. պատանեկական միութեան օրգան

„ԱՐՇԱԼՈՅՍ"

շաբաթաթերթի

Թաւրիզում ամսական բաժանորդագինն է 1,50
Գաւառներում ,, ,, 2 ղրան։
Բաժանորդագրուել ցանկացողները դիմեն Աշոտ Մ. Բաղդասարեանին

## ԱԶԴ

Ուղարկելով անդորրագրերը, խնդրում ենք մեր յարգելի բաժանորդներից իրենց բաժանորդագները յանձնել ցուցիչին կամ ինձ։
„Արշալոյս"-ի ֆինանսական Յանձնախմբի կողմից
Աշոտ Մ. Բաղդասարեան.

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կաթոլիկաց դպրոցի աշակերտները — գալիս են յայտնելու յարգոյ հասարակութեան, որ նոյն դպրոցի նախկին տեսուչ

**ՄԱԹՈՒՐԷՆ ԷՕԹՕԼԻՒԷԻ**

մահուան տարելիցի առթիւ, Հինգշաբթի յուլիս 12-ին, առաւօտ. ժամի 9-ին, նոյն դպրոցի եկեղեցում տեղի կունենայ հոգեհանգիստ՝ հանգուցեալի յիշատակին։

## ԴԵՄՕԿՐԱՏԻԿ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անժխտելի է մի երկրի աշխատաւորութեան ներկայացուցիչների ժողովի-պարլամենտի գոյութեան հրատապ անհրաժեշտութիւնը, հենց այդ երկրի աշխատաւորութեան անմիջական շահերի տեսակէտից, նամանաւանդ երբ նա լիազօրւած է, ըստ երկրի սահմանադրութեան, լայն դեմօկրատիկ իրաւունքներով։ Աստի և օրէնսդիր պարլամենտը ներկայացնի իրենից կատարեալ աշխատաւորութեան ներկայացուցչութիւն, (ինչպէս քիչ առաջ անւանեցինք այն) և առաջնորդւի ռամկավար սկզբունքներով. նա պիտի իրենից ներկայացնի կատարեալ ժողովրդական ներկայացուցչութիւն. իսկ այս վերջինն իրականանալ կարող է դեմօկրատիկ ընտրութիւնների միջոցով։ Ուրպէս այսպիսին աշխատաւորական կուսակցութիւնների կողմից ընդունւած է քառանդամ ընտրական սիստեմը. ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրական իրաւունք,— որի վրայ պիտի աւելացնել և համեմատական ձևը։

Ժամանակակից դեմօկրատական կուսակցութիւնները հիմնւած են քաղաքացիների կատարեալ հաւասարութեան սկզբունքի վրայ։ Բոլոր քաղաքացիք իրար հաւասար են։ Բնաւ չի պատահում, որ երկրի ազգաբնակութեան աչքի ընկնող մասը զրկւում է ընտրական իրաւունքից այս կամ այն անհիմն պատճառաբանութեամբ։ Յաճախադէպ են որ դասային ներկայացուցչութիւնները, որոնց ընտրութեանը երկրի ազգաբնակութիւնը մասնակցում է ոչ թէ որպէս անհատ, այլ որպէս մի դասակարգի անդամ, ուրից բնականաբար շահւում են երկրի արտօնեալ դասակարգերը, այս դասային ներկայացուցչութեանը մօտ է և ցենզային ներկայացուցչութիւնը. դա լինի հարստութեան թէ կրթական ցենզ և որովհետև հարուստ դասակարգը, իր նիւթական միջոցների շնորհիւ երկուսն էլ կարող է ունենալ, ուստի և դարձեալ ընտրութիւնները լինում են յօգուտ շահագործող դասակարգի։ Բազմազգեան ազգաբնակութիւն ունեցող երկրներում յաճախ մանր ազգութիւնները զրկւում են ձայնատուութեան իրաւունքից, նոյնը տեղի է ունենում յաճախ նաև կրօնի կամ դաւանանքի վերաբերմամբ. այսպիսի խտրութիւններն անշուշտ հակասում են հաւասարութեան սկզբունքին, որից ամենից աւելի տուժում է այդ երկրի աշխատաւոր մասսան։ Բացի յիշած բոլոր սահմանափակումներից պէտք յիշել նաև կանանց ընտրական իրաւունքից զրկելը, հիմնւած մի շարք անհիմն պատճառաբանութիւնների վրայ, որոնք բոլորն էլ ջրւում են և չեն դիմանում քննադատութեան։

Ուրեմն աշխատաւորական կուսակցութիւնները, հիմնւած բոլոր քաղաքացիների հաւասարութեան սկզբունքի վրայ,— ընդունելով, որ վերոյիշեալ գրեթէ բոլոր խոչընդոտներն ընդհանուր ընտրական սիստեմի դէմ, բղխում են նախ շահագործող դասակարգի շահերից և ապա հաւասարութեան սկզբունքի թիւր ըմբռնողութիւնից, — պահանջում են, որ պարլամենտի ընտրութիւնները լինեն առանց դասակարգի, հարստութեան, ազգի, դաւանանքի կամ կրօնի և սեռի խտրութեան որոշ տարիքից սկսած, ամբողջ ազգաբնակութեան մասնակցութեամբ։

Յաճախ ճիշտ է վերոյիշեալ պահանջները լրացւում և երկրի ամբողջ ազգաբնակութիւնը մասնակցում է ընտրութիւններին. սակայն գործել տեղի է ունենում հաւասարութեան սկզբունքի խախտումն, որովհետև երկրի ազգաբնակութեան որոշ խաւերն ստանում են մէկից աւելի ձայն, ուղղակի կամ անուղղակի կերպով։ Բնականաբար այս տարբերութեան խաւի մէջ չէր կարող մտնել աշխատաւորութիւնն, որովհետև հենց այս ընտրական իրաւունքի անհաւասարութիւնը բղխում է կապիտալի շահութիւնից։

Ի նկատի ունենալով վերոյիշեալ հանգամանքը— հաւասար ընտրական իրաւունքի խախտումը,— որ տեղի է ունենում յօգուտ լոկ ունևոր և արտօնեալ դասակարգի շահերի, աշխատաւորութեան շահերը պաշտպանող կուսակցութիւնները պահանջում են, որ ընտրութիւնները լինեն ընդհանուր լինելուց բացի և հաւասար— իւրաքանչիւր ընտրող ունենայ միայն մէկ ձայն և ոչ մի պայմանով աւելի։ (Շարունակելի)

Հրաչ

## ՄԵՐ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ

### III

(Շարունակութիւն և վերջ)

Կեանքի անողորմութիւնը, մարդկանց երկու անհաւասար բանակների բաժանւած լինելը— աշխատող ու վայելող, ճնշող ու ճնշւող, շահագործող ու շահագործւող— և նրանցից խոշորի՝ աշխատաւորի դասը, որ ներկայումս իր վրայ է կենտրոնացրել համարեա մարդկութեան մի խոշոր տոկոսի

